ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պարսկաստանի համար տարեկան 10 ֆր. և կամ 4 ըբլ. Թղթդրմ.
Եւրոպայի և այլ տեղերի համար տարեկան 20 ֆրանգ
Տնօրէնութիւնն ինք կը վճարէ լրագիրը ղրկելու փոստի ծախքը։ Բաժնեգիրները կանխիկ կը վճարուին։ Վեցամսեայ կամ եռամսեայ բաժնորդագրութիւններ ալ կընդունուին, առանց ոեւէ յաւելման բաժնեգինին վրայ։ Հատով կը ծախուի ամեն տեղ 20 սանթիմ

Նամակ և ծրար պէտք է ղրկել հետեւեալ հասցէով· M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia*. MARSEILLE (France)

Ե ՏԱՐԻ ԹԻՒ 10

1889 ՍԵՊՏԵՄԲԵՐ 21

ՍԵՊՏԵՄԲԵՐ 9 (Հ. Տ.)

ՁԱՓԱԹ

Կը հրատարակուի Դ. և Շբթ. օրերը

ՊԱՏՄԱՆՆԵՐ

Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով և կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւնները։ Պարտաւոր չէ վերադարձնել չհրատարակուած ձեռագիրները։ Յանուցմներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։ Յանուցման 1 միջակ գիրը 1 սանդիմ կարժէ· 1 գլխագիրը 2 սանդիմ։

Les annonces, en français et en arménien, sont reçues aux bureaux de la Rédaction (Rue Vacon, 50)

ՀԱՑՈՑ ՀԱՑԵՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

==

ՆՊԱՏԱԿ ԵՒ ՄԻՋՈՑՆԵՐ

(Քաղուած կանոնագրէն)

«Հայոց Հայրենասիրական Միութեան» նպատակն է աշխատիլ վարչական բարենորոգութիւններ մտցնելու Թիւրքահայաստանի մէջ, Հայ ժողովրդի տեղական պէտքերուն համեմատ։ Հայ ժողովրդի ցանկութիւնն է իրաւունք ստանալ ազատօրէն ինքզինք կառավարելու որով միայն պիտի կրնան վերնալ այն հարստահարութիւնները որոնք այսօր Հայաստանի թշուառութեան և աւերակ դառնալուն պատճառ կը լինին։

«Հայոց Հայրենասիրական Միութիւն»ը իւր նպատակ իրագործելու համար իւր կարողութեան չափով կը գործադրէ ամեն յարմար եղած միջոցներն, ժամանակի պահանջներին համեմատ կաշխատի ներքին այժ գոյացունել Ազգին մէջ իւր ազատութեան համար, հրատարակութիւններ կանէ, դիմումներ կանէ որոյ որ պէտք է և նիւթապէս ու բարոյապէս կը քաջալերէ անոնց որոնք անձնուիրութեամբ կաշխատին հայրենիքի ազատութեան գործին։

Միութիւնը կաւնենայ իրեն բերան եղող լրագիր որ, բացի գանագանլուբեր տալէ իրեն լրագիր, կը հարցադէ ընդհանրութեան ինչ որ Միութիւնը ուզէ հաղորդել, տեղեկութիւններ կուտայ Հայաստանի և ապարանակ Հայերի դրութեան վրայ և կը ծառայէ հայրենասիրական եռանդը արթնցնելու Հայերին մէջ։*

Տանօր. «Հայոց Հայրենասիրական Միութեան» անդամակիլ կամ թղթակից ուզողներն պէտք է դիմեն հետեւեալ հասցէին.

M. Portoukalian
(FRANCE) Marseille

* Հայոց Հայրենասիրական Միութիւն»ը կը նպատակ Ամերիկա լրագրի հրատարակման։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Սօցիալիզմը հայ թերթի մէջ.—Պր. կատրսթօճի ճամակը· — Ամերիկա. — Թիւրքիահայ լուրեր. —Տեղական. —Արտասահմանի լուրեր.—Տանուցումներ· — Բանասիրական (իմ հայրասպան ընկերը)։

ՍՕՑԻԱԼԻԶՄԸ ՀԱՑ ԹԵՐԹԻ ՄԷՋ

(Շար. 9րդ թուհն)

Մենք չէինք խօսի Հնչակեան յայտնուած սօցիալիզմի մասին, եթէ նա պատուաստած չլինէր Հայոց կեանքի վրայ, չդիպչէր մեր այժմեան կացութեան, եթէ մենք չհակառէինք, մեր կարծիքով, խաչը սխալները թէ՛ հէնց սօցիալիզմի մասին և թէ՛ այն դատողութիւնների մէջ, որոնք վերաբերւում են Թիւրքահայերի անկախութեան ձեռք բերելուն։

Վերջին իր հաւատներով վերոյիշեալ թերթը ներկայանում է ընթերցող հայ հասարակութեան իբրեւ բերան (օրգան) հայ սօցիալիստ-յեղափոխականների։ Հայ ընթերցողն անծանօթ լինելով այդ նոր գիտութեան, նոր վարդապետութեան հետ (և նա չի կարող ծանօթանալ, որովհետեւ բնաւոր տերութիւններն արգելում են նրա մուտքն իրանց երկիրները), ՅԱՌԱՋԻՆ ԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻՆ ՄԷՋ։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՄ ՀԱՅՐԱՍՊԱՆ ԸՆԿԵՐԸ

(Կ. Պոլսոյ Հայոց կեանքին առնուած մի իրական վիպ)

ԳՐԵՑ ԱՊԼՂԱՐԻՊ

(Շար. 8րդ թուհն)

Հետեւեալ օրն ընդհանուր հրամանատարը իւր օգնական փաշաներն իւր մօտ հաւաքեց և խորհրդակցութեամբ որոշում առին որ նոյեմբեր 24ին մեծ զօրութեամբ յարձակում ընեն Ըմբռուքի անցքին անցնելու համար որպէս զի կարող լինին Յէթինան դրաւել։ Թուրք գինուորները սաստիկ վրէժխնդրութեամբ լեցուած էին Մօնթէնէկրօցոց դէմ. իւրաքանչիւր բանակի մէջ կը ասէին աղմուկ և հայհոյանք թշնամւոյն դէմ, գինուորք պատրաստութիւն կը տեսնէին, մին հրացանը կը մաքրէր, միսը դղեակներու ժանգերը կխզոտէր։ Այսպէս կարգաւ կաշխատէին ամեն մարդ և ահա եկաւ նոյեմբերի 24րդ օրն. առաւօտեան արշալոյսը դեռ չէր ծագած, Թրքաց թընդանօթները սկսան ամբակոծել թշնամւոյն դիրքերը։ Մօնթէնէկրօցները չը պատասխանեցին. այնպէս ճեւացուցին որ վախուստ տուած են իրենք։ Թրքաց զօրաբանակները սկսան յառաջանալ։

Ընթերցողաց գաղափար մը տալու համար այդ անցքի վրայ, պարտք կը համարիմ նկարագրել ասա։ Ըմբռուք կոչուած տեղը մի նեղ ճանապարհի անցք է որուն լայնութիւնն է 2 ½ մէթր և երկայնութիւնը կը տեւէ 4 ժամ. ճանապարհն երկու կողմի բարձրութիւնն է 200 մէթր. կարծես բնութիւնը ստեղծած է այդ դիրքը պատերազմող անձօր ազգի մը համար· վարէն մինչեւ վեր սրածայր ապառաժներով զարդարեալ է. եթէ մարդ գլուխը դէպի երկինք վերցնէ, կը տոկայ։ Այդ բնական բարձրաբերձ ապառաժներու գագաթը Մօնթէնէկրօցիք չինած տառեր տնկած էին որոնց մէջ փոքրիկ լեռնային թնդանօթներ զետեղուած էին։ Երբ Տէրվիշ փաշայի բանակները ամբողջապէս ներս մտան Ըմբռուքի անցքէն, այն ատեն Մօնթէնէկրօցիք սկսան թընդանօթի ռումբեր արձակել և ապառաժի ահագին կտորներ գլորել դէպի վար Օսմանեան զօրաց վրայ· այս վերջին գործողութիւնը կատարողները կանայք էին որոնց ամուսինները զէնքով կը պատերազմէին։ Ընթերցողը թող երեւակայէ անգամ մը թէ այդ նեղ անցքի մէջ ինչ սարսափելի տեսարան մը կը ներկայանար. դիակ դիակի վրայ, վիրաւորեալք վիրաւորելոց վրայ, մին օգնութիւն կաղաղակէր «Եա՛ Մուհամմէտ» կոչելով, միւս մը մահուան վիճակի մէջ կը մրմռար «Եա՛ Ալլահ իլ Ալլահ»։ Ահա այսպէս առաւօտէն մինչեւ կէսօր տեւեց պատերազմը. Տէրվիշ փաշա չկրնալով դիմանալ ստիպուեցաւ ետ քաշուիլ 3 հազարի չափ մեռեալ և 4 հազարէն աւելի վիրաւորեալ թողլով· այդ վիրաւորելոց մինալ ես էի։ Հետեւեալ օրը բոլոր վիրաւորեալները փոխադրեցին Մասթարի հիւանդանոցը։

Տէրվիշ փաշա խոստացած էր Սուլթան Ապիզի որ եթէ զինքը ընդհանուր զօրաց հրամանատար կարգէ, կրնայ ամբողջ Մօնթէնէկրօցոց երկիրը գրաւել։ Սուլթանը ընդունելով իւր առաջարկը ուղարկած էր զինք. բայց երբ այնչափ զինուոր կոտորեց և չկրցաւ յաջողիլ, ստիպուեցաւ հրաժարիլ այդ պաշտօնէ և մեկնիլ Կ. Պոլիս, ճերմակ երեսով... ուխտելով որ մէկ մ'ալ այդ երկրի անունը չտայ իր կենաց մէջ, վասն զի կերած էր այդ քաջերու բաքսառաց։ Ահա այսպէս վերջացաւ Թրքաց այդ վերջին պատերազմը Մօնթէնէկրօյի հետ։ Իսկ ես չորս ամիս ժամանակ մը ետքը Եւրոպայի հեղինակների սօցիալիստական գրվածքների հետ։ Հայ ընթերցողների մեծամասնութեան դեռ անյայտ են այնպիսի գրողները, որպիսին են՝ Կարլ Մարքս, Լասալ, Էնգելս, Մէն-Սիմօն, Ֆուրիէ, Հէնրի Ջորջ և ուրիշները։

Բայց կարելի է մեր մեղադրանքներն անտեղի են, կարելի է Հնչակի հրատարակիչներն առաջ հայ սօցիալիստներ չէին, նոր են պայծառացել այդ վարդապետութեան ճշմարիտ լուսովը (և որը մեր կարծիքով աւելի հաւանական է). եթէ այդպէս է, մենք ներողութիւն ենք խնդրում, որ չենք նկատել նրանց մետամօրֆոզը։

Ինչ եւ իցէ։ Դիմենք հայ սօցիալիստի գաղափարներին, որոնք այսպէս թէ այնպէս երեւան են գալիս «Նոր Հոսանք» յօդուածով։

Կրկնում ենք, մենք չէինք խօսի Հնչակում յայտնված սօցիալիզմի մասին, եթէ նա չհաղցնէր չափահաս եւրոպացու հագուստը դեռահաս հայի վախտ մարմնին։

Հայ սօցիալիստն իր պրօգրամը բաժանում է երկու մասի. առաջինը՝ «Հեռատես նպատակ, այսինքն սօցիալիստական գրվածքների հետ։ Ընթերցողը թող երեւակայէ անգամ մը թէ այդ նեղ անցքի մէջ ինչ սարսափելի տեսարան մը կը ներկայանար. դիակ դիակի վրայ, վիրաւորեալք վիրաւորելոց վրայ, մին օգնութիւն կաղաղակէր «Եա՛ Մուհամմէտ» կոչելով, միւս մը մահուան վիճակի մէջ կը մրմռար «Եա՛ Ալլահ իլ Ալլահ»։ Ահա այսպէս առաւօտէն մինչեւ կէսօր տեւեց պատերազմը. Տէրվիշ փաշա չկրնալով դիմանալ ստիպուեցաւ ետ քաշուիլ 3 հազարի չափ մեռեալ և 4 հազարէն աւելի վիրաւորեալ թողլով· այդ վիրաւորելոց մինալ ես էի։ Հետեւեալ օրը բոլոր վիրաւորեալները փոխադրեցին Մասթարի հիւանդանոցը։

Տէրվիշ փաշա խոստացած էր Սուլթան Ապիզի որ եթէ զինքը ընդհանուր զօրաց հրամանատար կարգէ, կրնայ ամբողջ Մօնթէնէկրօցոց երկիրը գրաւել։ Սուլթանը ընդունելով իւր առաջարկը ուղարկած էր զինք. բայց երբ այնչափ զինուոր կոտորեց և չկրցաւ յաջողիլ, ստիպուեցաւ հրաժարիլ այդ պաշտօնէ և մեկնիլ Կ. Պոլիս, ճերմակ երեսով... ուխտելով որ մէկ մ'ալ այդ երկրի անունը չտայ իր կենաց մէջ, վասն զի կերած էր այդ քաջերու բաքսառաց։ Ահա այսպէս վերջացաւ Թրքաց այդ վերջին պատերազմը Մօնթէնէկրօյի հետ։ Իսկ ես չորս ամիս

ալիստական կազմակերպութեան հաստատութիւնը Հայաստանում,» և երկրորդը՝ «Մօտակայ նպատակ, այսինքն ընդարձակ ռամկապետական քաղաքական ազատութիւն Թիւրքահայաստանում և ազգային անկախութիւն.» Նա ուզում է անպատճառ « այնպիսի ազգային անկախութիւն, որը կամփոփվէ ընդարձակ ռամկապետական քաղաքական ազատութեան պայմաններում », և պնդում է, «որ այդպիսի ազգային անկախութեան պիտի դիմել այսօր» : Նա չի ձգտում « Հայաստանից ստեղծել մի երկրորդ Բոլղարիա անհատական ըէժիմով, որովհետեւ այնտեղ մուտ կը գործէ կապիտալիզմը և խոշոր գործարանական արդիւնագործութիւնը, ինչպէս այդ լինում է այժմ Մերրիայում ու Բոլղարիայում... իսկ յայտնի է, թէ այդ գործարանական, այդ կապիտալիստական խոշոր արդիւնագործութիւնն ի՛նչ խորին անհատապարութիւն ծագեցրեց եւրոպական ժողովուրդների զանազան կարգերում, ի՛նչ ծայրեղ թշնամութիւն առաջացրեց եւրոպական հասարակութեան զանազան դասակարգերի մէջ ... իսկ այդ բոլորն անպատճառ այդպէս կը լինի, եթէ վաղը Հայաստանում մենք ունենանք աւհատական կառավարութիւն, աւհատ կառավարիչ : »

Բայց առայժմ խնդրեմ, պարոն սոցիալիստ, այն ի՞նչերն է, որ այժմեան հանրապետական երկրներում, որտեղ չկայ անհատական կառավարութիւն, անհատ կառավարչի հոտն անգամ, ծաղկում է խոշոր գործարանական արդիւնագործութիւնը, կապիտալիզմը տարածել է իր ուժեղ թեւերը : Ինչի՞ն է, որ Ֆրանսիան կորելով իր անհատ կառավարչի գլուխը և հաստատելով այժմեան կառուցվածքը, ունի բայի զանազան գործատէրներից, 75 փոքր-տապրակ հարուստներ, որոնց ամէն մէկի հարստութիւնը հասնում է 25 միլիոն ֆրանգի. իսկ Ամերիկայի Միացեալ-Նահանգները—100 նոյնանման դրամի արիստոկրատներ. միայն Գուլդն ունի 1375 միլիոն դրամագլուխ, 70 միլիոն տարեկան եկամուտով, Մակեյ — 1250 միլիոն ֆրանգ, 62½ միլիոն տարեկան եկամուտով : Մօտ ծանօթացէք, ո՛վ սոցիալիստ, Շվեյցարիայի հետ ... այն Շվեյցարիան որն ունի referendum, այսինքն ժողովրդական քուէարկութիւն օրէնքների հաստատութեան համար, այն երկրի, որն ունի մինչեւ անգամ մի քանի կանոններ, ուր ամբողջ ժողովուրդը հաւաքվում է բաց երկնքի տակ, կանոչաղարդ դաշտում ուղղակի քուէ տալ նոր օրէնքներ ստեղծելու համար (Zandsgemeiden). բա՛, ինչո՞ւ այդ երկրում էլ է «ծածանում կապիտալիզմի անիծված դրօշակը» : — Ինչպէս երեւում է, այդ իրողութիւնները անտեսանելի ու անհասկանալի գաղտնիքով ծածկված էին մեր հայ սոցիալիստից :

Բայց կարելի է այդ երկրներում, ինչպէս Մերրիայում ու Բոլղարիայում, կապիտալիզմը մուտք է կոխել նրա համար, որ նրանց «յեղափոխական» նները աղգային անկախութիւն ձեռք բերելիս, չեն մտածել կամ չեն կարողացել նախապէս նախապատրաստել... որ նրանք այն ժամանակ չեն ունեցել սոցիալիստ-յեղափոխական զօրեղ կուսակցութիւն », ինչպիսին է, կաւելացնենք մենք, այժմեան հայ-սոցիալիստ-յեղափոխականները ... «Բոլղարիան (և միւս երկրները) այդ չարեց. նա լոկ հիմա է ուզում անել այդ իր սոցիալիստների գործունէութեամբ. բայց մի՞թէ դրանից պէտք է հետեւեցնել որ մենք է՛լ չպիտի անենք » :

Հարցնում ենք. դէցուք որ հէնց այսօրվանից Հայաստանն ունի այնպիսի ազգային անկախութիւն, որն ամփոփվում է ընդարձակ ռամկապետական քաղաքական պատասխանութեան պայմաններում (ա՛խ, երբ կը լինի այդ). դէցուք որ այդ թշուառ երկիրն որ եւ է կախարդական զօրութեամբ ենթարկվեց վերոյիշեալ անպատրաստ մետամօրֆոզին, կրկին հարցնում ենք պարոն սոցիալիստից, ի՞նչ պէտք է անել, որ եւրոպական կապիտալիզմը մուտք չի կոխի մեր աշխարհը, ի՞նչպէս «նախապատրաստե՛լ հայ ժողովրդին կապիտալիզմի ախտից, առաջն առնել Հայաստանում այդ ախտի մուտք գործելուն, որը կատեղծէ երկրում հազարաւոր, միլիոնաւոր (!?) բանւոր-աղքատներ, պրօլետարիատ դասակարգ... »

Ուրիշ ոչ մի միջոց չկայ, կաւելացնենք մենք, եթէ ոչ օրէնքով արգիլել Եւրոպայի դրամի, ապրանքի, մեքենաների և այլն մուտքը մեր ազատված Հայաստանը. նրա սահմանների վրայ մաքսատներ չլինել, որ ձիան անգամ չկարողանայ ոտք կոխել. մի խօսքով, խափանել ազատ առեւտուրը : —Այդպէս անելով, մեր հայ սոցիալիստը խանգարում է սոցիալիզմի փուքսիաս գալատեան, որովհետեւ սոցիալիզմի հայր, Կարլ Մարքսն ասում է՝ « ... հովանաւորող սիստեմն այժմ երեւան է գալիս իբրեւ պահպանողական, մինչդեռ ազատ առեւտուրը գործում է կործանիչ կերպով : Նա լուծում է առաջնայ աղգութիւնները և պրօլետարիատի ու բուրժուազիայի հակադրութիւնը հասցնում է ծայրայեղութեան : Մի խօսքով, ազատ առեւտրի սիստեմը փութացնում է սոցիալական յեղափոխութիւնը...»(1)

Հայ սոցիալիստն արդիւնքով (իր թերթի մէջ) կապիտալիզմի և պրօլետարիատի զարգացումն, հակասում է իր երեւելի ուսուցիչների ասածներին, որոնք գրում են թէ՝ սոցիալիզմը

(1) Կ. Մ. Ձառ ազատ առեւտրի մասին. երես 22 :

ծնունդ է կապիտալիզմի, խոշոր արդիւնարերութեան, որոնք ստեղծում են պրօլետարիատ դասակարգ. միայն այդ դասակարգի համար և ձեռքով պիտի ստեղծվի սոցիալիստական կազմակերպութիւնը : — Այդպիսով հայ սոցիալիստները ոչնչացնում են իրանց պրօգրամի առաջի մասը՝ « Հեռաւոր նպատակը», և իրանց օդեղէն ամբիոնից իջնում և հասարակ մահկանացուների կարգն անցնում:

Բայց ո՛չ, թողնենք այդ հեռու ապագան, երբ « թէ՛ հայոց լեզուն և թէ՛ հայկական գրականութիւնը դառնալու են արխիվների փոշին պահար, որի մէջ ուսումնասիրութեան համար կթաղվէ հեռաւորքիր որդը...». եթէ թողնենք այդ «Հեռաւոր նպատակը», էլի հայ սոցիալիստները հասարակ մահկանացուներ չեն, որովհետեւ նրանք ունին իրանց պրօգրամի երկրորդ մասը՝ «Մօտակայ նպատակ», որը պահանջում է « այնպիսի ազգային անկախութիւն, որը կամփոփվէ ընդարձակ ռամկապետական քաղաքական ազատութեան պայմաններում ... և որին պիտի դիմել այսօր» :

Եւս պարզ է. սխալվել չէ կարելի. «Մօտակայ նպատակով» հայ սոցիալիստը ցանկանում է ստեղծել Թիւրքահայաստանում մօտաւորապէս մի այնպիսի կազմակերպութիւն, որպիսին է Ամերիկայի Միացեալ Նահանգներինը կամ Շվեյցարիայինը, կամ Բաֆֆիի « Խենթի » երազում տեսածը (Բաֆֆին աւելի որամտաբան էր. նա երազի մէջ տեսնում էր այդպիսի կազմակերպութեան գալուստը հարիւր տարուց յետոյ), կամ մի ուրիշ աւելի բարձր կազմակերպութիւն. մի խօսքով, «ընդարձակ ռամկապետական քաղաքական ազատութիւն», և որին պիտի դիմել հէնց այսօրվանից, առանց ուշացնելու, որ խոշոր արդիւնագործութիւնը ժամանակ չունենայ ոտ կոխելու մեր հայրենիքը, այսինքն մեր թշուառ երկրի այն մասը, որ դեռ դանվում է բարբարոս Թիւրքի ձեռքի տակ և որի անպատատ դաշտերում թափառում է աւազակ քիւրդը, իսկ անթիւ աւերակներում վաղուց տեղաւորվել է չարագուշակ բուն :

Այնպիսի մտքեր քարոզելը պարզ ապազգայ է, որ հայ սոցիալիստը չատ քիչ ծանօթ է հայ ժողովրդի հետ, այն ժողովրդի, որը դանվելով դարերից ի վեր անլսելի բռնակալութեան տակ, ղուրկ է մարդկային բարձր յատկութիւններից, անկարող է եղել ստեղծել իր մէջ քաղաքակրթական ղարգացման ամենափոքր սերմերն անգամ, այն ժողովրդի, որի ահագին մեծամասնութիւնը ղուրկ է լուսաւորութեան ամենաթոյլ նշոյլներից և դեռ հեռու է ինքնուրոյնութենից, ինքնաճանաչութիւնից : եթէ նա մօտ ճանաչէը հայերին, նա կիմանար, որ նրանք չունեն դեռ քաղաքական հասունութիւն, չէը պնդեր թէ՝ հէնց այսօրվանից պէտք է դիմել ընդարձակ ռամկապետական անկախու-

Մասթարի աւստրիական հիւանդանոցի մէջ մնացի անոք և անվսխիթար, մինչեւ որ վէրքերս դարմանուեցան :

Ե

Այժմ դառնանք մեր հայրասպան ընկերի կեանքը նկարագրել : 1887 թուականին իմ բարեկամ Գէորգի մայրը մեռաւ : Գէորգի փոքրիկ եղբայրը և երեք քոյրերը թշուառութեան ենթարկուած էին և այդ թշուառութեան պատճառն ալ անոնց հայրն էր : Այս անձը վատահոգի սրիկայ մ'էր. նա իւր կնոջ հիւանդութեան օրերը կը թողուր զնա անպաշտպան և ինքզինքը արբեցողութեան տալով անպատիւ կանանց հետ կը զուարճանար. երբ մահամերձ կինը կը տեսնէր այս անվայել եղելութիւնները, կը զգուշացնէր զնա և կը խրատէր որ հեռի կեանայ այնպիսի անբարոյականութենէ. բայց նա փայտ մը առնելով ձեռքը կատաղաբար կը յարձակէր խեղճ կնոջ վրայ և անդթօրէն կը հարուածէր դիակ դարձած կինը : Այս անձը սարսիչ Թաչիկ կը կոչուէր. նրա բնակավայրն էր Իսկիւտար վանքի Այգի կոչուած արուարձանը. հասակը 38-40 տարեկան, նիհար և սեւադէմ մէկն էր. իւր աչացը մէջ կը տեսնուէին արեան բարակ բիծեր որ նման մ'էին իւր

արբեցողութեան : Պէտք չէ զարմանալ Թաչիկի վայրենի բնութեան վրայ, վասն զի կըսէին թէ նրա հայրն ալ ժամանակաւ մի ոճրագործ է եղեր. անոր համար հոս կը բերեմ այն հայկական առածը թէ «Օձէն ձուկ չծնիր, ոչ ալ գայլէն գառն». հայրը մարդասպան մ'էր, իսկ որդին սրիկայ : Այս ընտանեաց մէջ ժամանակաւ կը թագաւորէր մշտական սէր և երջանկութիւն, բայց այժմ լացն ու կոծը, հառաչանք և արտասուքն եղան իրենց բաժին. հիւանդ կինը չդիմանալով իւր ամուսնոյն բարբարոսութեանը, իր կեանքը վերջացուց : Կնոջ մահուանէն յետոյ աւելի սարսափելի կերպով սկսաւ ընտանեկան կռիւը. հայրը սկսաւ ծեծի տակ հոգին հանել իւր հարազատ զաւակներուն : Գէորգ ապստամբեցաւ իւր անբարոյական հօրը դէմ և արդէն արդարութիւնն այնպէս կը պահանջէր :

Թաչիկ իր կնոջը մահուանէն երեք օր վերջը հեռացաւ տունէն թողլով իւր որբ զաւակները. նոյն արուարձանի մէջ նա մի անպատիւ կին կը սիրէր. դիշեր ցերեկ չէր բաժնուէր անկէ. որբերը ամայի տան մէջ փակուած անօթի և անխնամ անգադար արցունք կը թափէին: Գէորգ բժշկական վարժարանի ներքին աշակերտ ըլլալուն պատճառաւ չաբաթը մի անգամ

հրաման ունէր տուն երթալու : Ուրբաթ օր մը Գէորգ տուն երթալով իր եղբարցը մօտ, ականատես եղաւ իւր վայրենի հօր գործած բարբարոսութեան, լսեց բոլոր եղելութիւնը և յետոյ դիմեց իւր տաներէց քահանային, Նոր Թաղի Թաղական խորհրդոյն և ամենէն վերջը Անմահն Ներսէս Պատրիարքին. ապատեց մի քանի չաբաթներ, բայց հայրը զգաստանալու փոխարէն աւելի եւս կը սաստկացնէր բարբարոսութիւնը. ոչ տաներէցը, ոչ Թաղական խորհուրդը և ոչ ալ Պատրիարքը կարող եղան Թաչիկը ուղղութեան բերել. ամեն երեկոյ ծեծ ու կոծը կըտիրէին տան մէջ : Գէորգ տեսնելով այս ամեն չարչարութիւնները, վճռեց բարբարոս հօր մը դէմ բարբարոս որդի լինել. այլ եւս կատաղութեան կրակը վառուեցաւ Գէորգի մեայլ աչացը մէջ : Վերջապէս օր մը Թաչիկ այն անպատիւ կնոջ ձեռքէն բռնելով բերաւ տուն և իր տան երէցը կոչելով ուղեց պատկուիլ. բայց երէցը մերժեց նրա առաջարկութիւնը, և ահա Թաչիկ աւելի սաստկացուց իր վայրագութիւնը և աններելի ոճիրները. նա տունէն դուրս վանեց իր զաւակները որոնց ամենէն մեծն 14 տարեկան աղջիկ մ'էր :

(Շարունակելի)

Թեան, որից զուրկ են լուսաւորեալ Եւրոպայի շատ և շատ երկիրները։

(Շարունակելի)

Պ. ԿԼԱՏՍՈՆԻ ՆԱՄԱԿԸ

Մեր ընթերցողների յայտնի է որ մեծանուն մարդասէր Պր. կյատըսթօն Հայաստանի մէջ եղած հարստահարութիւններին նկատմամբ մի նամակ հրատարակեց Լոնտոնի Տէյլի Նիւս լրագրին մէջ։ Այսօր կուզանք այդ նամակի բարգմանութիւնն տալ մեր ընթերցողների, իբր մի յիշատակարան արձանագրելով զայն Արմէնիայի մէջ։ Նամակը հրատարակուած է Տէյլի Նիւսի օգոստ. 27ի թուին մէջ եւ վերնագիրն է «ԹԻՒՐՔԵՐԻ ԱՆԳԹՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԱՐՄԷՆԻԱՒ ՄԷՋ։»

Տէյլի Նիւսի խմբագրութեան,

Տէր,

Կարդալով ուրբաթ օրի ձեր լրագրի էջերին մէջ Թիֆլիսէն ձեր հայ թղթակցի ղրկած վերջին տեղեկութիւնները, այնուհետեւ ինձ հաղորդուած մի եղելութեան նկարագրութիւնը կը ղրկեմ ձեզ հրատարակելու համար, եթէ կը հաճիք։ Այդ եղելութիւնը հաղորդուած է ինձ մանրամասնօրէն նշանակելով անձերի անուններն և ժամանակն և այնպիսի մի աղբիւրէ առնուած է որ ճշմարտութեան ամեն նշանակներն ունի։

Դեռ մոռցուած չէ թէ Տէյլի Նիւսը գործիք եղաւ 13 տարի յառաջ Պուլկարիայի մէջ դործուած անգթութիւնները երեւան հանելու որի հետեւանքն եղաւ Թիւրք վարչութեան ջնջուիլը այդ նահանգի մէջ։

Պէտք է նաեւ ըմբռնել այս կէտ թէ մենք դաշնադրով իրաւունք ըստացած ենք խնդրել Սուլթանէն որ վերջ տրուի այդ բոլոր վայրագութիւնների և այդ չարագործները իրենց արդար պատիժ գտնեն։

Կը յուսամ որ Նորին Վեհափառութեան կառավարութիւնը * պիտի հաճի քննութեան առնել այս բոլոր եղելութիւնները մինչեւ իրենց աղբիւրի դիմելով և երբ վերջնականապէս հաստատուին անոնք, պիտի հաճի հանրային կարծիքի օգնութեամբն ցոյց տալ իւր զօրութիւն մարդասիրութեան և արդարութեան գաղին մէջ։

Մնամ, Տէր,

Ձեր ամենահաւատարիմ ծառայ

Վ. Ե. ԿԼԱՏՍՈՆ

25 օգոստ. 1889

Հաւատրեր

Անցած մարտ ամսին մէջ Մուսա պէյ իրեն հետ առնելով իր եղբայր Ճաղօն և քեռայրը Էմին պէյն, հարիւր չափ մարդերէ բաղկացած մի խմբի գլուխն անցած, գիշեր ժամանակ բռնի մտաւ Աղաճանի տունը խարց գիւղին մէջ որ Մուչէն 18 մղոնի չափ հեռի է և կը դանուի Մուշի և Բաղէշի մէջտեղ։ Նախապէս սպանեց Աղաճանի հայրը՝ Մարթինի հրացանը կրակելով անոր վրայ. յետոյ

* Անգլիական կառավարութիւնը։

ԽՄԲ.

սկսան մտնել սենեակները ուր այդ տան մարդերը պառկած կը գտնուէին և հրացանի ձայները լսելով արթնցած էին յանկարծ։ Երբ ադոնք տեսան թէ ասպաղներէ շրջապատուած են, փորձեցին փախչիլ, բայց չկարողացան։ Այդ ժամանակ Մուսա պէյ և իր մարդերը սկսան բանալ դարանները, անտուկները և ասպրի տալ ինչ որ կրցան ձեռք անցունել։ Այնուհետեւ իրենց հետ առին տարին Աղաջանի կնիկը Ալթուն և անոր 15 տարեկան աղջիկը Կիւլիւզար։ Կիւլիւզարը սատաբորիկ և գիշերային հանդերձանքը առեւանգած տարած են։ Ձիւնը ծածկած էր երկիրը և կը հասնէր մինչեւ ճանրորդների ծունկերը. օդը սաստիկ ցուրտ էր։ Ալթուն, աղջկան մայրը, չկրցաւ դիմանալ և մէկ ժամի չափ երթալէ յետոյ, ա՛լ քայլելու անկարող լինելով ինկաւ ձիոց ճանապարհին վրայ։ Կիւլիւզար մինակ ձիոց այդ հրոսակների ձեռք սրոյ կաղաչէր որ Թողուն զինք երթայ. բայց անոնք զարնելով ծեծելով կը քշէին յառաջ, երբեմն ալ մազերէն քաշելով։ Մի քանի վայրկեան յետոյ, Կիւլիւզարն ալ անկարող եղաւ աւելի յառաջ երթալու և ինկաւ ձիւնին մէջ։ Այս դրութեան մէջ մի գետակէ անցնելէ յետոյ շարունակեցին ճանրան դէպի Ծղոգաղբար ուր Մուսա պէյ մի տեսակ բնակարան ունէր։ Դիշերը այնտեղ անցուցին և աղջիկը առաջին անգամ լինելով բռնաբարուեցաւ այնտեղ Մուսա պէյէն։ 3 օր լեռների մէջէն ճանապարհորդելէ յետոյ հասան Փարսանք գիւղը ուր աղջիկը տարին Շէյխ Մէհմէտի տունը։ Այդտեղ Կիւլիւզար ինկաւ Շէյխին ոտքն և աղաչեց որ ազատէ զինք այդ տւսպաղների ձեռքէն։ Շէյխը գնաց Մուսա պէյի մօտ և խնդրեց որ թող տայ երթայ այդ աղջիկ. բայց Մուսա պէյ պատասխանեց թէ այդ անկարելի է և թէ Կիւլիւզարը յափշտակած էր իր եղբօր ձաղօին կին տալու համար։ Ձաղօն վրայ եկաւ և Մուսա հրամայեց Շէյխին որ իր եղբօր և այդ աղջկան առնուելութեան արարողութիւնը կատարէ։ Շէյխը պատասխանեց թէ աղջիկը քրիստոնեայ է և չուզեր մահմետական դառնալ. հետեւապէս չուզեր ամուսնացուիլ և ըսաւ թէ պէտք է ուրիշ տեղ երթայ։ Այն ժամանակ Մուսա պէյ դանակը քաշեց որ աղջիկը սպաննէ, բայց իր ընկերները միջամտելով չթողուցին և ձաղօ մտիկ չանելով Շէյխի խրատին, աղջիկը առաւ տարաւ Աւետիքի գիւղը և այնտեղ ինչաւ Սէֆերի տունը որ Մուսա պէյի քրոջ Մհերիի երկրին է։ Այդտեղ Կիւլիւզար դանդատեցաւ Մհերիին և խնդրեց որ զինք ազատէն. բայց ի զուր. իրեն ըսին թէ ձաղոյին կնիկ գարձած լինելով ա՛լ մահմետական եղած է։ Կիւլիւզար այդ տան մէջ մէկ ամիս ճիոց ձաղոյի քով մինչդեռ Մուսա պէյ իր ընկերներով գնացած էր լեռներն նորանոր ասպատակութիւններ և յափշտակութիւններ անելու։ Մէկ ամսէ վերջ ձաղօն մեհնեցաւ այդ տունէն Կիւլիւզարին հետ և գնացին Շէյխաւերան գիւղը։ Անտեղ վեց օր անցուցին Շէյխին տունը և անկէ ալ եկան գնացին Խէվէնիա գիւղը ուր կը բնակէր Մուսա պէյ։ Մնացին այնտեղ 3 շաբաթ և գրեթէ այդ միջոցին էր որ կառավարութեան կողմէն Հաճի Դայիպ անուն մէկը և երկու ոստիկաններ Մուշէն եկան իջան Մուսա պէյի տունը։ Ատոնք աղջիկը ուզեցին. բայց ձաղօ չուզեց որ Թողու երթայ. և աղջիկն ինքն ալ մերժեց երթալ, ըսելովթէ «Ես մահմետական եղած եմ. հանգիստ Թողէք զիս»։ Հաճի Դայիպ ըսաւ թէ աղջիկը պէտք է երթայ Մուշ միւթէսարրըֆին և անոր առջեւ ըսէ թէ ինք մահմետական եղած է։ Աղջիկը պատասխանեց թէ Թող միւթէսարրըֆին ու մէճլիսը դան իրեն մօտ և ինք անոնց կը յայտնէ մահմետական լինելը։ Այդ միջոցներն էր որ Մուսա պէյ հասաւ Բաղէշ և այնտեղէ ճանրայ եկաւ Կ. Պոլիս երթալու համար։

Հաճի Դայիպ տեսնելով որ աղջիկը չուզեր Մուշ երթալ և կարծելով թէ յիրաւի նա մահմետական եղած է, տարաւ Բաղէշ. արդէն աղջկան ուղածն ալ այդ էր։ Կիւլիւզարը Բաղէշի մէջ իջեցուցին Շէյխ Էմինի տունը և երբ տարին զինք վալիին և մէջլիսին առջեւ, յայտարարեց թէ ինք քրիստոնեայ է և քրիստոնէի աղջիկ։ Ասոր վրայ աղջիկը յանձնուեցաւ Հայոց Վարչական Ժողովին և պատրաստութիւններ տեսնուեցան Կիւլիւզարն ալ ուրիշների հետ Կ. Պոլիս ղրկելու համար որպէս զի ճշմարտութիւնը լսուի այնտեղ Մուսա պէյի դէմ։

Ճաղօ դեռ 16 տարեկան է միայն և արդէն բազմաթիւ ոճրագործութիւնների հեղինակ եղած է։

Բաղէշէն 9 մղոնի չափ հեռուն գտնուող Կօռնի գիւղի բնակիչներէն Օհան անուն մէկը երկար ժամանակ Մուսա պէյէն հալածուեցաւ։ Անցած մարտ ամսի մէջ Մուսա պէյ իմացաւ որ Օհան գնացած է Բաղէշ. իւր մարդերէ մին, Համսի անուն, ղրկեց Բաղէշ որ բարեկամ ձեւանալով Օհանին վերադարձած ժամանակ ճանապարհի ընկերը լինի։ Երբ ատոնք մօտեցան գիւղին, տեսան որ Մուսա պէյ մի խումբ մարդերով կուգայ իրենց վրայ։ Եւ երբ հասան, Մուսա պէյ հրամայեց իր մարդերի որ իրենց հետ բերած երկաթներն տաքցունեն։ Այդ հրաշէկ երկաթներով մի շատ տանջանքներ տալէ յետոյ Օհանին, խոխոնջով մի մեծ կրակ վառեցին և Օհանը ողջ ողջ նետեցին բոցերուն մէջ։ Այսպէս ամբողջ այրուելով մեռնելէն յետոյ, գիակը նետեցին ճանապարհին վրայ. երկու օր յետոյ երկու Հայեր անկէ անցած ժամանակ գտան Օհանի այրուած գիակը և զայն տանել տուին իր տուն, իր կնոջ կուլօյին։ Օհանի բնակած գիւղին Հայերը առին այդ գիակ տարին Մուշ, կառավարութեան լսնանելը. բայց միւթէսարրըֆ Ահմէտ փաշան ըսաւ թէ այդ գործ իրեն չպատկանիր և թէ պէտք էր տանիլ Բաղէշ նահանգապետին մէջլիս փաշային։ Դիակը թաղեցին և մէկ աղերսագիր ղրկեցին Բաղէշ։ Մուսա պէյ կանչուեցաւ Բաղէշի նահանգապետին մէջլիսը ուր մէկ ժամ կորնցունելէն յետոյ թոյլ տրըուեցաւ իրեն երթալ։

1889 ապրիլ 16ին Մուսա պէյ իր հետ առնելով ձաղօն, Քըր Էօմէր պէյը, Սիյահ Էօմէր պէյը, Իսմայիլ պէյը, Տերվիշ օղլուն և Սատըգ պէյ օղլու Սէֆի պէյը և տասնոց մարդերէն կազմուած մի մեծ ասպատական խմբի գլուխն անցնելով, մտան Տափավանք գիւղը ուր չհետակ գնացին Յակոբի տան վրայ։ Նախ սպաննեցին Յակոբի հայրը Մանուկը և յետոյ Մուսա, Իսմայիլ և Էմին միացած սպաննեցին Յակոբը խանջալի հարուածներով։ Այդ միջոցին Յակոբի կնիկը իր երեք զաւակներով մէկտեղ Մուսա պէյի ոտքերը փաթթուած կաղաչէր որ խնայէ իր ամուսնու կեանքին. Մուսա պէյ բռնեց այդ տղայներէ երկուքը որոնք աւելի փոքրերն էին (մէկը 2 տարեկան էր և միւսը 8 տարեկան) և զանոնք սպաննելով նետեց մէկ կողմ։ Այնուհետեւ այդ Քիւրդերը բռնաբարեցին տան մէջ գտնուած բոլոր կիներն ու աղջիկներն որոնք 17 հոգի էին և իրենց ամենէն պզտիկը 10 տարեկան էր։ Յակոբի կնոջ ձեռքերը բոլորովին ծածկուած էին վերքերով. այդ վէրքեր նա ստացաւ ինքզինք և իր տղաները պաշտպանելու համար դիմադրած միջոցին։

Բաղէշի վալիի անունն է Իսհէմ փաշա. Մուշի միւթէսարրըֆի անունն ալ Ահմէտ փաշա։

ԱՐՄԷՆԻԱ

Մուշի գէպքերէն և Մշեցիների բարձրաձայն բողոքելէն ի վեր, անգլիական, ֆրանսական, գերմանական, ռուսական և այլ լրագիրները շատ անգամ կը հրատարակեն հեռագիրներ և յօդուածներ «Արմէնիա», «Արմէնիայի գործեր» և այլն վերնագիրների տակ։ Առանք ամենքը թարգմանել անհնար կը լիներ, մանաւանդ որ մեր ընթերցողների համար նորութիւններ չեն քանի որ արդէն կարդացած կը լինին Արմէնիայի մէջ։ Բայց երբեմն նակի զանազան արտատպելը Արմէնիայի մէջ աւելորդ չենք համարիր, մանաւանդ երբ հաղորդուած լուրերն թարմութիւն կը կրեն իրենց վրայ։

Կ. Պոլսէն սեպտ. 18ին հաղորդուած կը տեսնենք ֆրանսական լրագիրներին մէջ հետեւեալ հեռագիրը։

« Իտալական, անգլիական և ամերիկական դեսպաններին Բ. Դրան արած դիմումներին պատճառով, Սուլթանը հրաման ըրաւ որ Արմէնիայի կատարածների հեղինակն եղող Մուսա պէյի դատաստանը սկսին տեսնել։ Բայց Մուսա պէյ կարողացաւ յայտնութիւններ անել և ապացոյցներով հաստատել թէ պաշտօնական չատ անձեր իրեն գործակից եղած և իր կողոպտածներէ իրենց ալ բաժին

առած են։ Բ. Դուռը վախնալով թէ գայթակղական տեսարանները երեւան պիտի ելնեն, չանքեր կանէ այժմ այդ գործ խեղդելու, բայց մինչեւ այժմ դեռ չէ յաջողած։»

ԹԻՒՐԲԻԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Յոյների Պատրիարքը հրաժարա-
կան ղրկեր է Բ. Դուռը, պատճա-
ռելով թէ իր գրած բարբիրները ու-
շադրութեան չեն առնուիր։

— Պէրութի թիւրք պաշտօնեայ-
ները նաւահանգստին մէջ դտնուած ֆրանսական մի շոգենաւի վրայ եր-
թալով ձերբակալեր են բազմաթիւ Սիրիացիներ որոնք Ամերիկա կը գաղ-
թէին։

— Երկու չաբաթի չափ առաջ Կ. Պոլսէն ղրկուած են դէպի Սամսօն, Փոքր Ասիոյ նաւահանգիստը, Քրու-
բի վեց թնդանօթներ և 200 նռնուկ ռումբ։

— Կ. Պոլսի լրագիրներն կը գրեն թէ Կրէտէի չարժման պատճառով ձերբակալուած Պր. Խրիսթօտուլաքին աքսոր պիտի ղրկուի Ֆէյզան, Ափ-
րիկեան Տրիպոլսի նահանգի ներքին կողմերը։

— Տանկի վարակիչ հիւանդութիւ-
նը տարածուեր է Կ. Պոլսի մէջ։

— Լսուր կայ թէ Դատական նա-
խարարութեան խորհրդական Վահան էֆէնտին Հռոմի օսմանեան դեսպան պիտի անուանուի, փոխանակ յունադ-
դի Ֆօթիատէս փաշային։ Իտալական կառավարութիւնը այս մասին իր հա-
ճութիւն ցոյց տուած է, բայց Սուլ-
թանը դեռ վերջնական որոշում տը-
ուած չէ։

— Յունաստանի դահաժառանգ Կոստանդին իշխանին Ալմանիայի վիլ-
հելմ կայսրի քրոջ Սոֆիա իշխանու-
հուն հետ ամուսնանալուն առթով, Սուլթանը իր կողմէ ներկայացուցիչ պիտի ղրկէ Աթէնք մեծ տարատա-
պետ Միւնիր փաշան որ թանկագին ձիեր նուէր պիտի տանի Հելլէննե՛րի ապագայ թագաւորին։

ՏԵՂԱԿԱՆ

Բլէնի տօնավաճառը կը վերջանայ
վաղը, կիրակի երեկոյ։

—Երէկ այստեղ մեկնող Մեսա-
ժըրիի չոգենաւը բազմաթիւ հակե-
րով կարասիներ տարաւ Պիրէան։ Յու-
նաստանի թագաւորական տուներ փա-
յիզէն մեծ քանակութեամբ կահ կա-
րասիներ բերել կուտայ, իւր մօտա-
կայ հարսնիքներուն համար։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Անվէրսի (Պելժիք) մէջ փամփուշ-
տի մի գործարան պայթելով, անոր մօտ գտնուած քարիւղի մի մեծա-
նոցն ալ կրակ առեր և այնպէս սար-
սափելի աղէտ պատճառեր է որ բազ-
մաթիւ շէնքեր և մարդեր զոհ եղեր են ողջ ողջ այրուելով կամ փլատակ-
ներուն տակ մնալով։ Կորստեան թիւը դեռ ճիշդ գիտցուած չէ. բայց կը կարծուի որ մեռածներուն և ծանրա-
պէս վիրաւորուածներուն թիւը մի քա-
նի հարիւրի կը հասնի։

—Սոֆիայէն կիմացուին որ Զան-
քովեան կուսակցութեան պարագը-
լուխ պուլկարներէն մի քանին ձեր-
բակալուեր են որովհետեւ Ալէքսանդր Զարի անուան տօնախմբութեան առ-
թով երկրին մէջ մի յուզում հանել կուզէն եղեր ի նպաստ Ռուսիոյ։

—Լուր կայ թէ Տանիմարքայի գա-
հաժառանգ իշխանը պիտի ամուսնա-
նայ Վիլհելմ կայսրի ամենէն փոքրիկ քրոջ Մարգարիտա իշխանուհուն հետ։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

Նոր հրատարակութիւններ

ՀԱՑՈՑ ՀԱՅԲԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Ա. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ

«Հայրենասիրական Միութեան» հրատարակած այս վարդապետարանին մէջ համառօտ կերպով բացատրուած է թէ իւրաքանչիւր հայրենասէր Հայ ինչ իղձեր պէտք է ունենայ և ինչ պարտքեր ունի կատարելու։

Գինն է 20 սանթիմ և կը ծախուի Արմենիայի խմբագրատունը։ Մէկ ան-
գամէն 20 օրինակ գնողը կը վճարէ 3 ֆրանգ և 50 սանթիմ միայն, փո-
խանակ 4 ֆրանգի։ Փոստի ծախքը կը վճարուի «Հայրենասիրական Միու-
թեան» կողմէն։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Է

ԼԻՆԶԻ ՕՐԷՆՔԸ ՏԱՃԿԱՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(ՊԱՏԿԵՐ ՄՕՏԻԿ ԱՊԱԳԱՅԻՑ)

ԳՐՔԷ Մ. Պ.

Այս տեսարկի մէջ ցոյց կը տրուի
թէ բռնաւորներուն և ազգամատնիչ
Հայերուն դատաստանը ինչպէս պէտք
է տեղնուի այնպիսի երկիրներուն մէջ
ուր օրինաւոր և արդարադատ կա-
ռավարութիւն չկայ։

Մէկ օրինակի գինն է 20 սանթիմ.
20 օրինակը 3 ֆրանգ և 50 սանթիմ։
Փոստի ծախքը կը վճարուի Արմենիայի
խմբագրատունէն։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Ա. ՀԱՅ ԳԻՒՂԱՁՆՈՒՀԻ ՄԸ (*սպառած*)։

Բ. ՀԱՅ ԳԻՒՂԱՅԻ (*սպառած*)։

Գ. ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱՅԷԼԻ (*Հայաստանի ազատութեան ցանկացող մի Հայի մաղթանքներն և մտածումներն են Սաղմոսի ոճով գրուած*). 40 *սնթմ.*։

Դ. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՊՈՒԼՂԱՐԻՈՑ ԵՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՊՈՒԼՂԱՐ ԱՊՍՏԱՄԲԱՊԵՏԱՅ (*Պուլղար ազգին իր ազա-*
տութիւն ձեռք բերելու համար մեկ
դարէ ի վեր արած չանքերի խիստ
հետաքրքրաշարժ նկարագրութիւնն
է։) 1 *ֆր.* 50 *սթմ.*

ե. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹՇՈՒԱՌՆԵՐԸ. — Հայաստանցիներուն ժշուառութեան գլխաւոր պատճառն եղող պան-
դխտութիւնը մեր ազգային նոր-
ընծաիր վիպասանի գրչին նեւթ եղած է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹՇՈՒԱՌՆԵՐԸ անուն վէպին մէջ։ Իրական կեանքէ առ-
նուած այդ վէպ որ մաս առ մաս կը հրատարակուէր Արմենիայի մէջ, ա-
ռանձին տետրակով ևս հրատարակ-
ուած է այժմ և կը ծախուի Մեծ. Հեղինակին Պարոն Մկրտիչ Թիւթիւն-
ճիէֆֆի մօտ, (ինչպէս նաեւ Ար-
մենիայի խմբագրատունը)։

1 ֆր. 20 սանթիմ։

Զ. ԴԱՄԱՌ ՔԱԹԻՊԱ—ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ յետ այբուբենը աւարտե-
լուն. (Մեծանուն հայ բանաստեղծին վերջերս գրած ազատաշունչ ընտիր ոտանաւորներէն 32՝ որոնք իւր «Բա-
նաստեղծութիւնները»ի Հատաքածոյին մէջ չեն գտնուիր, առանձին տետ-
րակով հրատարակուած են)։ Այս տետրակէ որի չահը բարեգործական մի նպատակի յատկացած է, 50 հա-
տը մէկ անգամէն գնողին կը տրուի 50 հատը 2 ֆրանգ 50 սանթիմի, որ ըսել է հատը 5 սանթիմ կամ 10 փա-
րա թրքական։

Հատով կը ծախուի 0.10 *սթմ.*

Վերոյդրեալ բոլոր գիրքերը կը ծախուին, փոստի ծախքը Արմենիայի խմբագրատունէն վճարուելով։

ԼԵՒՈՆ ԹԱԳԱՒՈՐԻ

ՇԻՐՄԻՆ ՊԱՏԿԵՐԸ

Մեր վերջին թագաւոր Լեւոնի չիր-
մին պատկերն ունենալու համար շա-
տեր կը դիմեն մեզ տակաւին, թէեւ վաղուց արդէն յայտարարած ենք թէ այդ պատկերները սպառուած են։ Արդ կուգանք յայտնել ցանկացողնե-
րին թէ Արմենիայի Ա տարւ. 79րդ թուէն որ այդ պատկերը կրպարունակէ իւր մէջ և որ այդ պատճառով յատ-
կապէս սովորականէն տարբեր գեղե-
ցիկ թղթի վրայ տպուած է, մի քա-
նի հատ տակաւին մնացած կան խմբ-
բագրատունը։ Ցանկացողներին կարող ենք ղրկել անոնցմէ, հատը մէկ ֆր-
րանգի, ճանապարհածախքը խմբա-
գրատան վրայ։

Այդ թերթի մէջ մանրամասն տե-
ղեկութիւններ արուած են նաեւ Լե-
ւոնի գերեզմանին նկատմամբ։ Մեր ընթերցողներ կը յիշեն թէ Արմենիա լրագիրն էր որ Ա տարւ. 72րդ թուոյն (1886 *ապրիլ* 24) հրաւէր կարդաց Փա-
րիզարնակ Հայերին մի ուխտագնա-
ցութիւն հաստատել Լեւոն Լուսին-
եանի գերեզմանին և այդ առաջարկի համեմատ Ա հանդիսաւոր ուխտա-
գնացութիւնն եղաւ 1886 *մայիս* 18ին, ինչպէս որ մինչեւ այժմ կը կատարուի ամեն տարի։ Արդ, Արմենիայի վերո-
յիշեալ թուին մէջ, բացի այլ հետա-
քրքրական դրուածներէ, կայ նաեւ Փարիզէն մի թղթակցութիւն որ սքա-
նչացուցիչ և գեղեցիկ ոճով կը նկարա-
գրէ այդ առաջին ուխտագնացութիւն և հետաքրքրական տեղեկութիւններ կուտայ Մէն-Ֆլնիի այն շիրմի վրայ ուր հանգչած է մեր տարաբաղդ վերջին թագաւոր, Լեւոն Լուսինեան։

ՀԱՅ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՊԱՏԿԵՐԸ

1878ին Պէրլինի գնացած հայ պատ-
ուիրակութեան պատկերը՝ գեղեցիկ թղթի վրայ առնուած և պատուի-
րակներուն անուններն հայերէն և ֆը-
րանսերէն տառերով միանդամայն տը-
պագրուած, կը ծախուի Արմենիայի խմբագրատունը։ Գինն է 1 ֆրանգ, փոստի ծախքն խմբագրատունէն վճարուելով։

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

—ԱԶԳԱՍԷՐ (Վենետկի Մխիթարեան Պատ. Միաբանութեան հրատա-
րակած այս գիրքը որ 226 երեսներէ բաղկացած է, կը բացատրէ թէ ինչո՞ւ համար և ինչպէս պէտք է որ մարդ սիրէ իւր ազգ և հայրենիք և ցոյց կուտայ թէ ի՛նչ բարոյական պակա-
սութիւններ կը տիրեն մեր ազգի մէջ. թէ՛ օտար ազգերի և թէ՛ մեր ազգի պատմութիւնէն ազգասէր անձերի օ-
րինակներ բերելով, անոնց կենսագ-
րութիւններ կը ներկայացնէ ըն-
թերցողին։ Լեզուն Կ. Պոլսի հին աշ-
խարհաբառ ոճն ունի և տեղ տեղ մի քանի բառերի թուրքերէնն ևս նշանակուած է փակագծի մէջ, ա-
նուններին ալ դիւրահասկանալի լի-
նելու համար)։ 2 ֆր. 70 սնթ.

—ԿԻՒԶԱՒՐԻ. Եւրոպայի դանազան կող-
մերն և այլ տեղեր ցրուած Հայ գաղթա
կանութիւններին մէջ դժբաղդաբար շատեր կան մեր հայրենակիցներէ որ թուրքերէն խօսիլ գիտեն բայց հայե-
րէն լեզուն չեն հասկնար որ կարդան իրենց ազգային լեզուով գրուած «Հա-
յոց պատմութիւն»ները։ Այդպիսինե-
րին կը ներկայացնենք ահա ԿԻՒԶԱՒՐԻՆ որ Զահրեան Հ. Միքայել վար-
դապետի գրած եռահատոր ընդար-
ձակ Հայոց պատմութենէն քաղելով մէկ հատորի մէջ ամփոփուած և հա-
յերէն տառերով ու թուրքերէն լեզուով գրուած, կը ներկայացնէ մեր Հայ ազգի պատմութիւնը։

Գինն է 3 ֆր. և 60 սանթիմ, փոս-
տի ծախքը վճարուելով Արմենիայի խմբագրատունէն. իսկ Մարսէյլի մէջ գնողներին համար 5 ֆրանգ։

Ինչպէս ամեն լրագիրներ, Արմենիան ալ կընդունի ծանուցումներ հրատարա-
կելու համար. անոնք որ պէտք կունե-
նան Արմենիայի միջոցով մեկին դիմում ա-
նել կամ մի բան յայտարարել, պատրաստ ենք ընդունիլ իրենց ծանուցումներ ըստ լրագրական սովորութեան։ Ծանուցում-
ների գիներն նշանակուած են Արմենիայի ճակատը, տառի վրայ հաշուելով. 1 եր-
կսմեակի (գլխագիր) համար 2 սանտիմ և 1 բոլորգրի համար 1 սանտիմ։ 3 ան-
գամ դրուելիք ծանուցումի գնին վրայ 0/0ին 10 զեղչ կը լինի. 10 և աւելի ան-
գամներ դրուելիք ծանուցումի գնին վր-
րայ 0/0ին 30 զեղչ։ Սակարկութիւն չըն-
դունուիր։

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ
Le Gérant : FÉLIX ENFFANTIN.

ՄԱՐՍԷՅԼ
Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի
Marseille. — Imprimerie du Midi, M. SCHICKLER rue Vacon 50.